

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍՏԵՐ

28.07.2008թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ. Գևորգյանը, Յու. Պողոսյանը, Ա.Շաբոյանը, Վ. Դավթյանը, Ա.Աղազարյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ նախագահի գլխավոր խորհրդական Ջ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ. Սարոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Լ. Պետրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Գ. Մարտիրոսովան և նույն բաժնի գլխավոր մասնագետ Ա. Գյուլբենկյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույունջյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի պետ Ա. Հարությունյանը:

Նիստում լսվեց հետևյալ հարցը.

1. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

1.1. Հաղորդում Շվեյցարիայի Ժնև քաղաքում 27.05-29.05.2008թ. տեղի ունեցած ՄԱԿ-ի առևտրի և զարգացման կոնֆերանսի հրավերով «Տեղեկատվական հանրության գնահատման գլոբալ միջոցառում» թեմայով համաժողովին ,

1.2. Հաղորդում Ֆրանսիայի Փարիզ քաղաքում 10.06-12.06.2008թ. տեղի ունեցած UNECE-UNICEF-UNDP-OECD կողմից կազմակերպած «Պաշտոնական վիճակագրության դերը փաստերի վրա հիմնված որոշումներ կայացնելու գործում» թեմայով սեմինարին Հարավ-արևելյան, եվրոպական և ԱՊՀ երկրների համար, Եվրոպայի վիճակագիրների կոնֆերանսի 56-րդ լիակազմ նստաշրջանին, ԱՊՀ երկրների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 37-րդ հերթական նիստին,

1.3. Հաղորդում Թաիլանդի թագավորության Բանգկոկ քաղաքում 18.06.-20.06.2008թ. տեղի ունեցած ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և

սոցիալական հարցերով հանձնաժողովի (ESCAP) կողմից կազմակերպված «Մարդահամարի և հետազոտությունների միկրոտվյալների տարածում. առավելություններ և մարտահրավերներ» թեմայով աշխատանքային հանդիպմանը,

1.4. Հաղորդում Իսպանիայի Բարսելոն քաղաքում 08.07-13.07.2008 թ. տեղի ունեցած Եվրոպական բնակչության 2008թ. կոնֆերանսի (EPC 2008) աշխատանքներին, ինչպես նաև «Մահացության վերջին տարիների միտումների վերագնահատման փորձ Կովկասյան երկու երկրներում զեկույցը» ՀՀ ազգային վիճակագրության, Փարիզի Ժողովրդագրական հետազոտությունների ազգային ինստիտուտի (INED) և Վրաստանի Բնակչության հետազոտությունների կենտրոնի մասնագետների հետ համատեղ հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ հաղորդումները:

Որոշեցին՝

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումները ընդունելի գիտություն:

/Անհատական/

12.08.2008թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ. Գևորգյանը, Յու. Պողոսյանը, Ա. Շաբոյանը, Վ. Դավթյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ. Գրիգորյանը:

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ նախագահի գլխավոր խորհրդական Ջ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ. Սարոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Լ. Պետրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը:

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1. «Ժամանակի օգտագործման ուսումնասիրություն» հիմնական հետազոտության համար նախատեսված հարցաթերթի և օրագրի նախագիծը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/

Որոշեցին՝

Հաստատել «Ժամանակի օգտագործման ուսումնասիրություն» հիմնական հետազոտության հարցաթերթը և օրագիրը համաձայն հավելվածի:

/Անհատական/

2. «Մանկական քանակակազմի, հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի, կանխարգելիչ պատվաստումների, այլ պատվաստումների և պատահական ծակոցների, բժշկական հակացուցումների և պատվաստումներից հրաժարվողների վերաբերյալ» Ձև թիվ Պ-1/հ, «Բժշկական իմունակենսաբանական պատրաստուկների և օժանդակ պարագաների շարժի մասին» Ձև թիվ Պ-2/հ, «Պատվաստումներում ընդգրկվածության և կորստի մակարդակի վերաբերյալ» Ձև թիվ Պ-3/հ, «Կառավարելի վարակիչ հիվանդությունների վերաբերյալ» Ձև թիվ Պ-4/հ վարչական վիճակագրական հաշվետվական ձևերին և դրանց լրացման հրահանգներին հավանություն տալու մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Ն.Բաղդասարյան/

Որոշեցին՝

Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մանկական քանակակազմի, հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի, կանխարգելիչ պատվաստումների, այլ պատվաստումների և պատահական ծակոցների, բժշկական հակացուցումների և պատվաստումներից հրաժարվողների վերաբերյալ» Ձև թիվ Պ-1/հ, «Բժշկական իմունակենսաբանական պատրաստուկների և օժանդակ պարագաների շարժի մասին» Ձև թիվ Պ-2/հ, «Պատվաստումներում ընդգրկվածության և կորստի մակարդակի վերաբերյալ» Ձև թիվ Պ-3/հ, «Կառավարելի վարակիչ հիվանդությունների վերաբերյալ» Ձև թիվ Պ-4/հ վարչական վիճակագրական հաշվետվային ձևերին և դրանց լրացման հրահանգներին:

/Անհատական/